




ԿՐՕՆԵԿԵՆ, ՊԵՏՄԵԿԵՆ, ԲԵՆԵՍԻՐԵԿԵՆ, ԵՒ ԲԵՐՈՅԵԿԵՆ.

ԹԻՒ Է. — ՇՐՋԱՆ Ե.

1872

ՏԱՐԻ Ե. — ՅՈՒԼԻՍ 31

Կ Ր Օ Ն Ե Կ Ս Ն

ՊՏՈՒՂ ՅԱՆԿԱԼԻ

ՈՐ Է

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ՍՈՒՐԻ ԵՍ ՏԵՐ»,

ՀԱՐՑԻՆ.

(Շարունակում է):

Որ Բաղկապարած հայցմամբ խնդրելով լուրջումն է Տեառնէ, և աղէիւր Բժշկանքն է Բաղկապարած աշխարհէ:

Որպէս թէ դք անկեալ ի խորխորատ ինչ զձեռն իւր կարկառեալ՝ աղաչէ կարողացն ի վեր հանել զանձն իւր՝ անձնապատան եղեալ նոցա:

Ոյնպէս առնէ և Երանելիս անկեալ ի թշուառ յայս կենցաղ. զհոգի և զմարմին իւր յանձն արարեալ Աստուծոյ, որպէս թէ ընկալ ասէ զիս հանդերձ որդւոյքս ի խնամս որորմութեան ձրիա-

բաշխ շնորհօք քովք, ի բռնութենէ անհաւատից, յարձակմանէ բանակաց դիւաց, և յազգի ազգի աղանդոց, ի հարըստահարութենէ ընդդիմամարտ ունակութեանց, և ի յամառութենէ անտարժարձ կրից՝ յորս կամք անկեալք անելանելի, և կրեմք ի վիհս աշխարհելի աշխարհիս՝ զտառապանս՝ զբազմածուփ խռովութիւնս զայսոսիկ, որ և յամենուստէք շնչէ առ մեզ զբառնաբեր հողմս վշտակութեան, ի չարահայր թշնամոյն կամաց սատանայի: Քայս նշանակելով բացեալ և տարածեալ ունի զձեռս իւր ի յերկինս առ Տէր, և հայցէ զորորմութիւն նորա ի նմանէ. ուստի ասաց «որ բազկատարած», ի Որպէս Մովսէս ի գլուխ լերինն տարածէր զբաղունկս ընդդէմ Ամաղեկայ՝ որով զօրանայր Իսրայէլ, և ի խոնարհելն՝ զօրանայր Ամաղեկ. ըստ այսմ այրս ըստ սրտին Աստուծոյ երկրորդ Մովսէս սքանչելին Յակօբ, որոյ ի տարածելն՝ զօ-

րանայր նորն Խորայէլ ընդդէմ աներեւո-
 թին Ամաղեկայ, որով պարտեալ տկա-
 րանայր և տրտմեալ մնայր շուարեալ. ու-
 րախանային որդիքն Սիօնի ընդ պարտեւ
 թշնամոյն. և ռիսորտայր բանսարկուն ընդ
 ուրախութիւննոցա. ի յարձակիլն ի վերայ
 նորա ծաղր և այսպն լինէր, ի զօրութենէ
 տարածեալ բազկացն Յակօբայ, և ի փա-
 խուստ աճապարէր. յաղօթել նորա՝ ի
 դերեւ ելանէին խրոխտանք նորա, և ու-
 նայնանար սպառնալիք նորա. շողշողէր
 զսուսեր չարութեան իւրոյ ընդդէմ քը-
 րիստոնէից, և ի շողշողելն բազուկք նո-
 րա՝ թուլանային. ի բազկատարած մաղ-
 թելն սրբոյն առ Աստուած, զուարճանա-
 յին որդիք բարութեան, և թաղծեալ
 մնային որդիքն չարութեան. առ այս՝ և
 վասն այսր տարածէր զբազուկսն ժրաջան
 մշակն հաւատացելոց սուրբն և առաքի-
 նազարդ հայրապետն մեր Յակօբ, որով
 և հայցէր ի Տեառնէ զողորմութիւն. առ
 ինչ. և վասն զոր պատճառի արդեօք.
 ինձ թուի թէ զերկու իրաց տայ իմանալ.
 մի՝ վասն ի դժուարեւանելի լեառն ելից. և
 միւսն՝ յընդ հատանել ճանապարհին՝
 բղխելի ջրոյն. վասն զի ըստ նախկին մտաց
 մերոց, ելանելն ի գազաթ լերին անհնար
 իմն էր վասն երկարութեան ճանապար-
 հին՝ և բարձրութեան նորին. զի ըստ
 պատմելոյ աշխարհագրին՝ երկու մասն
 բարձրութեան լերինս, ասէ, երեւի ի հե-
 աւաստանէ սեւագոյն, և Գ. մասն սպիտակ՝
 սակս ծածկեալ գոլոյ գլխոյ նորա հանա-
 պազորդեան ձեամբք զամն ողջոյն. առ
 անհնարին բարձրութեան լերինս երեւի
 ի հեռաստանէ տասնօրեայ և երկուտա-
 սան օրեայ ճանապարհաւ, մինչև նաւք ի

Պասպից ծովուն տեսանեն զգազաթն նո-
 րա. ճանապարհորդք վկայեն վասն Մա-
 սիս լերինս անհամեմատ բարձր քան ըղ-
 բարձրագագաթն լերինս Աովկասու և Տաւ-
 րոսի. հող լերինս առհասարակ է առա-
 պար խիճ և աւազ, որպէս և հող ամե-
 նայն բարձրաբերձ լերանց. ոչ գտանի ինչ
 ի նմա, ոչ ծառատունի՝ և ոչ բոյս ինչ,
 այլ խոտ և փուշ, և այն սակաւ սակաւ
 ի տեղիս տեղիս, յոր հովիւք արածեն զար-
 ջառս և զոչխարս, մանաւանդ ի կողմանէ
 Նրեանայ, որք և ելանեն ի վեր ի լեառն
 գրեթէ մինչև ցօր վայր սկսանի ձիւնն.
 բայց անտի և անդր, ասէ, տիրէ ցրտու-
 թիւն անհնարին, և մանաւանդ թանձ-
 րամած յորդութիւն ձեան, և յամենայն
 կողմանց ահագին լերին հասուցանեն ուղ-
 խըս յորդախաղացս վերուստ ի վայր . . .
 առ գահավէժ հոսման ուղիցն ի վե-
 րուստ անտի՝ ընդ ամենայն կողմն լերին
 բացեալ կան ձորք և ծործորք: Ապա
 բազկատարած աղօթել սրբոյն զառաջինն
 յսկզբան ելանելոյ յայս լեառն ահագին
 մարթ է առնուլ, և ըստ այնմ որպէս թէ
 ասէր, դու Տէր, որ արարեր ողորմու-
 թեամբ քով զերկինս, և ամենայն արա-
 րածք, զնոյնս հայցեմք առաքել առ մերա-
 նարժան անձինս ի յԱթոռոյ փառաց քոց,
 որով կարողացուք ելանել յայս լեառն
 ահագին, և նշմարել զգործիս մարդկան
 ի համաշխարհական հեղեղէ ջուրց, և
 հռչակել առ ամենայն ազգս և լեզուս
 զմեծ բարեխնամ կամս քո առ մարդս, ո-
 րով միանգամայն կարկել զբերանս կա-
 մակորաց առ անձառ մարդասիրութիւն
 քո և ճշմարտութիւն. յոր և հաստա-
 տեալ կացցեն որդիք նորոյս Սիօնի, զորս

գնեցեր պատուական արեամբ քով սըր-
բով:

Ըստ երկրորդին՝ յընդմիջել ճանա-
պարհին լերինն՝ ծարաւեցաւ և ինքն և
որք ընդ նմայն էին, վասն որոյ դնէ ծուներ
յերկիր, և ջերմ հոգւով խնդրեաց ջուր
ի Տեառնէ. և ետ Տէր զոր հայցեացն, և
մինչև ցայս օր ի բժշկութիւն ամենայն
ախտից և հիւանդութեանց, անուանեալ
«աղբիւր Յակօբայ», և ըստ այսմ կամի
ասել «Տէր, Տէր, որ յարժամ օգնես
արարածոց զանազան բարութեամբ, և ի
թիկունս հասանես անձառ մարդասիրու-
թեամբ, օգնեա մեզ Տէր՝ այժմ զթա-
ցեալ ի վերայ մեր, և պարգևեա զառ ի
քէն անսպառելի ողորմութիւն քո պար-
գևելով ջուր ծարաւելոցս յայս անջրդի
տեղւոջ. որպէս շնորհեցեր ջուր Ամփ-
սօնի ի ցամաքեալ ծնօտէ անբան անաս-
նոյն, և որպէս Մովսէսի յապառաժ վի-
մէ յարբումն հնոյն Խարայելի, զնոյն խընդ-
րեմք ի Տեառնէդ՝ տալ մեզ, որով զօ-
րացեալ անձանց մերոց կարողասցուք յա-
ռաջադիմութիւն գործոյս ընթանալ որ
ի փառս քոյ. որպէս թէ ըստ այսմ աղօ-
թելով սրբոյն կայր բազկատարած, և
հայցմամբ խնդրէր զողորմութիւն ի Տեառ-
նէ, ոչ ասաց աղօթիւք, այլ հայց-
մամբք. և թէպէտ հայցումն ևս աղօթք
լի, այլ ոչ ընդհանրապէս ցուցանէ որ-
պէս աղօթքն. զի աղօթքն ընդհանրապէս
բաղում հայցուածս ցուցանէ ի մի գու-
մարեալ. իսկ հայցումն՝ մասնաւոր խնդիր
զատարար. և զի արժանանալ տեսու-
թեան տապանին և եթ ցանկայր՝ յատ-
կապէս զնմանէ միայն հայցմամբ խնդրէ,
որով և յայց ելցէ տէր ի բարութիւն,

ընդ նմին և վասն ջրոյն ի կէս ճանապար-
հին լերինն Մասեայ, ուրոյն յառաջին
խնդրոյ, առ ի զօրութիւն անձանց, և
յիշատակ յաւերժական յազգաց յազգս.
վասն որոյ և երկոքեանն ևս կատարեցաւ,
և թէպէտ ոչ եղև հրաման ելանել ի
լեռն և տեսանել զտապանն «Աոյեան»,
այլ ձեռամբ հրեշտակին ընկալաւ զփայտ
ի տապանէն փրկութեան ի հեղեղածուփ
պատուհասէն, որով կարկեցոյց զբերանս
չարայուզից, և եբարձ զգայթակղութիւ-
նըն՝ զպատճառն կորստեան, և անաղօտ
երեւցոյց զձշմարտապատում լինիլ սուրբ
գրոյս յաչս ճշմարտասիրաց:

Իսկ միւսն ի դնել զծուներ յերկիր՝ ըս-
կրասւ ահագին եռացմամբ բղխել ջրոյն
ի լեռնէ անտի ականակիտ և բարեհամ և
առողջարար ամենայն ցաւոց ի փառս և
ի պատիւ իւր ամենազօրին. վասն որոյ ա-
սաց «զողորմութիւն», և Նշ զու տես
զգեղեցկութիւն բանիցս. զիմրդ ըստ կար-
գի յառաջադրեաց զձշմարտութիւնս ի-
ւաց, զի առաքինական գործոց հատու-
ցումն՝ որպէս ասացաք, հայեցողական
տեսութիւնն է աստուածային, զոր շնոր-
հէ ի հանդերձեալն, իսկ աստ զոր ինչ և
պարգևէ՝ այն ամենայն յառատ ողորմու-
թենէ անտի է մեզ ձրիապէս, վասն որոյ
և Տէրն ասաց. «Խնդրեցէք նախ զարքա-
յութիւնն Ըստուծոյ և զարդարութիւնն
նորա, և այլն ամենայն յաւելցի ձեզ»,
այս ինքն՝ ձրիապէս շնորհեցի. ուստի զո-
ղորմութենէ նորին բուռն հարկանէ և ա-
պա հետեւեցուցանէ ասելով. «Նշ աղ-
իւր բժշկութեան բղխեալ ի Հայաստան
աշխարհի», և աստանօր գովով շաղկապ
հետեւողական, փոխանակ ասելոյ «վա

որոյ, , կամ « ուստի, , որով յայտ առնէ թէ բազկատարած ազօթել սրբոյն տիրապէս վասն բղխման ջրոյն էր, որ է գործ գլխաւոր և յիշատակ յաւերժական սրբութեան երանելոյս: Բայց լռելեայն և զառաջինն ևս ցուցանէ, և ապա հետեւաբար ասէ « աղբիւր բժշկութեան, , ոչ անյայտ է բանս, և ոչ ընդ գրութեանս ծածկեալ, այլ իբրեւ աշտանակ ի Հայաստան աշխարհի ակներե փայլի զանազան ախտից լեալ բժշկութիւն ի ջրոյն յայնմանէ՝ հաւատով և ջերմեռանդ հոգւով խնդրողաց, վասն որոյ և ոչ է պատշաճ ըստ յայտնի իրաց երկարաբանել յումպէտս ի ձանձրութիւն ընթերցողաց, և միայն համառօտակի տեսցուք զայսցանէ, զի ասաց « բղխեալ, , որով յայտ առնէ զինքնաբու զն լինել ջրոյն այնմիկ, և ոչ անձրեւ այլն ջրոց, կամ ծովու ընդ երակս երկրի անցելոց. այլ որպէս հարկանէր Մովսէս զվէմն՝ և վտակք խաղային ի նմանէ յարբումն Հրէական ժողովրդեան, ըստ այնմ ի պատիւ երեսաց երանելոյս ջուր ինքնաբուղն շնորհեաց Աստուած և անցամաքելի պահեաց յիշատակ յարաձգական յորդուց յորդիս, ի փառս իւր և ի պարծանս Հայկազեան տոհմիս, և զի սա Մեծն Հայաստան աշխարհի եղև, ըստ որում Մասիս ի Մեծն Հայաստան անկանի, և այն ի սէր ազգիս մերոյ, վասն որոյ ցնծութեամբ երգէ յասելն « ի Հայաստան աշխարհի, , աշխարհ բոլոր բազկացելոյն ի յերկնէ և յերկրէ ասի, այլ աստ բոլորն ի տեղի մասին առեալ զնէ. զի Հայաստան քաղաք մասն ինչ է Ասիոյ, և Ասիայն՝ չորրորդ կիսագնդոյս. ուստի փոխանակ ա-

սելոյ « Հայաստան քաղաքի, , ասաց « աշխարհի, , ապա զմեծութիւն սրբութեան և զառաւելութիւն մաքրակրօնութեան սրբոյ հայրապետիս, զյաւերժական յիշման արժանին, յառաջ բերեալ ներբողախառն բանիւ երգէ ասելով,
(Մեղեմն է յերեմիայն):

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ.

(Շորանիւնիւն):

Երնջակաբերդ.

Երնջակ գետոյ ձախ թևի վերայ, և Կորաշէն գիւղէն երկու վերստ հեռի կը բարձրանայ միապաղաղ սեան նման ուղղակի վեր: Հ. Մ. Չամչեան կղնէ այս լեռն ընդ մէջ Երնջակ և Գողթն գաւառաց, բայց միանգամայն սխալ. ըստ որում բուն համանուն գաւառի մէջն է, և Գողթն գաւառէն բաւական հեռի: Այս ամբողջիս գլխովն անցած դասնադէտ և քրտմնելի անցից յիշատակը մարդ կգորհուրեցնէ: Սա ինքն վաղ ժամանակէ հետէ ապաստանարան պիտի եղած լինի մեր ազգայնոց, թէ և պատմութեան մէջ առաջին անգամ նշանաւոր կհանդիսանայ Յուսուփ բռնաւորի պաշարմամբը, և Սմբատայ Խոստովանող Արքայի՝ սորա ստորոտը կրած կտտամահ տանջանքը, յամի 914: Այդ արիւնարբու անդուլթ բռնաւորն շրջ թայակապ կաշկանդած Հոյոց թշուառ և որդրմելի թագաւորը, և հետն առած կղի-